ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՏԻՊԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ (ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԺԲ.00.03 - մասնավոր իրավունք (քաղաքացիական առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ОГАННИСЯН АРСЕН ВОЛОДЯЕВИЧ

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ РЕОРГАНИЗАЦИИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ КОРПОРАТИВНОГО ТИПА ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (НА ПРИМЕРЕ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право: гражданское право; торговое (коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое право; право социального обеспечения.

ЕРЕВАН-2017

© National Library of Armenia OCR by Portmind

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Մ. Հայկյանց

իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Թավադյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. հուլիսի 4-ին, ժամը 11 ^{00}-ին ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор В. Д. Аветисян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор А. М. Айкянц

кандидат юридических наук А. А. Тавадян

Ведущая организация: Академия государственного управления РА

Защита состоится 4 июля 2017 г. в 11^{00} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 2 июня 2017 г.

Ученый секретарь специализированного совета,
Кандидат юридических наук А. А. Манасян

© National Library of Armenia

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձինք (այսուհետ նաև՝ կորպորացիա), հատկապես տնտեսական ընկերությունները հանդիսանում են տնտեսական հարաբերությունների հիմնական մասնակիցները, իսկ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային տնտեսական ինտեգրացիոն գործընթացներին մասնակցության ներկա պայմաններում ազգային տնտեսության զարգացման, շուկայական հարաբերությունների բոլոր մասնակիցների իրավունքների պաշտպանության նպատակով ժամանակակից քաղաքացիական օրենսդրությունը պետք է միտված լինի ապահովելու նման տնտեսվարող սուբյեկտների համար գործառման այնպիսի բարենպաստ պայմաններ, որի շնորհիվ վերջիններս կկարողանան ավելի արագ հարմարվել արտաքին և ներքին տնտեսական միջավայրի, ինչպես նաև շուկայի կառուցվածքի փոփոխություններին: Նշված իրավիճակում բիզնեսի վերակառուցման արդյունավետ գործիքներից է համարվում իրավաբանական անձի վերակազմակերպումը:

Ներկայումս կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպումը հանդիսանում է լայնորեն տարածված կորպորատիվ գործընթաց, որի միջոցով տնտեսական ընկերությունները կարողանում են հասնել իրենց բիզնեսի ֆինանսական և կազմակերպական հիմքերի բարելավմանը: Վերակազմակերպման գործընթացի միջոցով պահպանվում է քաղաքացիական շրջանառության կայունությունը, ապահովվում է երրորդ անձանց հանդեպ ունեցած իրավունքների և պարտավորությունների ամբողջական իրավահաջորդությունը, հնարավորինս երաշխավորվում են իրավաբանական անձի պարտատերերի իրավունքները, կրճատվում են կորպորատիվ գործողությունների կատարման ժամկետները, արտադրական կապիտալը չի բաժանվում իրավաբանական անձի մասնակիցների միջև և դուրս չի գալիս քաղաքացիական շրջանառությունից: Նշվածի արդյունքում վերակազմակերպման կառուցակարգը հանգեցնում է կազմակերպական և ֆինանսական ավելի նշանակալից արդյունքների:

Այդ ամենի հետ մեկտեղ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Քաղաքացիական օրենսգիրք) և կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձին կազմակերպահրավական ձևերի վերաբերյալ հատուկ օրենքները չեն ապահովում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացի կարգավորման այնպիսի մակարդակ, որի պայմաններում վերակազմակերպման կառուցակարգի միջոցով վերջիններս հնարավորություն կունենան առավել արդյունավետ հասնելու այն նպատակներին, որոնց հա-

© National Library of Armenia

մար նախաձեռնել են վերակազմակերպման գործընթացը:

Քաղաքացիական օրենսգիրքը հստակ չի բանաձևում վերակազմակերպման ձևերի էությունը, կարգավորում է միայն վերակազմակերպման սկզբի, վերջնարդյունքի և փաստաթղթային ձևակերպումների հետ կապված հարաբերությունները, ընդհանրապես չի անդրադառնում վերակազմակերպվող իրավաբանական անձի, նրա մասնակիցների իրավունքներին և դրանց պաշտպանության խնդիրներին, իսկ պարտատերերի իրավունքներին անդրադառնում է ընդհանրացված և անորոշ: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպումը կորպորացիայի առանձնահատկություններով պայմանավորված էականորեն տարբերվում է ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպումից դրա իրականացման ընթացակարգով և կորպորացիայի ու նրա մասնակիցների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությամբ, իսկ Քաղաքացիական օրենսգրքով և կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձին տեսակների վերաբերյալ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված կարգավորումները, ըստ էության, նման հնարավորություն չեն ընձեռում: Կորպորատիվ տիպի առանձին կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքները (օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների» և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները) վերակազմակերպման ընթացակարգեր չեն նախատեսում և հողում են կատարում Քաղաքացիական օրենսգրքին, որը նշված ընթացակարգերը լիարժեք կերպով չի կարգավորում: Նշվածն ընդգծում է քննարկվող խնդիրների արդիականությունը և դրանց լուծման առավել հրատապությունը:

Գործող օրենսդրական կարգավորումները չեն ապահովում վերակազմակերպվող կորպորատիվ տիպի իրավաբանական անձի, նրա մասնակիցների, պարտատերերի իրավունքների պաշտպանության բավարար մակարդակ, շատ դեպքերում խոչընդոտում են կազմակերպության մասնակիցների իրավունքների արդյունավետ իրացմանը, իսկ որոշ դեպքերում՝ զրկում վերակազմակերպման գործընթացում իրենց իրավունքները պաշտպանելու անգամ նվազագույն հնարավորությունից:

Բացի այդ, հարկադիր վերակազմակերպմանը վերաբերող հիմնահարցերը հայրենական գրականության մեջ բավարար չափով ուսումնասիրված չեն, իսկ առկա օրենսդրական կարգավորումներն էլ դրա գործնական իրացման ընթացքում կարող են առաջացնել կորպորացիայի և նրա մասնակիցների իրավունքների պաշտպանության բազմաթիվ խնդիրներ: Անհրաժեշտ մակարդակի վրա չեն գտնվում նաև վերակազմակերպման՝ շուկայում բնականոն մրցակցության համար ունեցած հնարավոր ազդեցությունները գնա-

© National Library of Armenia

հատելու և բացասական ներգործությունը կանխելու իրավական կառուցակարգերը:

Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման ընթացքում ծագող վերը նշված գիտական և գործնական խնդիրների կարևորությամբ և դրանց լուծման առաջնահերթությամբ էլ պայմանավորված է ատենախոսության թեմային ընտրությունը:

Հետազոտության նպատակները և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց (տնտեսական ընկերությունների օրինակով) բնութագրական հատկանիշների հիման վրա դրանց վերակազմակերպման առանձնահատկությունների վերհանումը, վերակազմակերպման, դրա առանձին ձևերի համակարգային ուսումնասիրությունը, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց նկատմամբ վերակազմակերպման կառուցակարգի և դրա առանձին ձևերի կիրառման ընթացքում առաջացող խնդիրների վերհանումը և օրենսդրության կատարելագործման համար առաջարկների մշակումը:

Նշված նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել վերակազմակերպման ինստիտուտը կարգավորող իրավական նորմերը,
- վեր հանել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման առանձնահատկությունները,
- վերլուծել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման խնդիրները, բացահայտել վերակազմակերպման էությունը, ինչպես նաև կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման դեպքում իրավահաջորդության իրավական բնույթը, բովանդակությունն ու առանձնահատկությունները,
- վեր հանել վերակազմակերպման, ինչպես նաև դրա ձևերի հիմնական բնութագրական հատկանիշները, ձևակերպել «վերակազմակերպում» հասկացությունը և դրա առանձին ձևերի հասկացությունները,
- բնութագրել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացը, դրա փաստաթղթային ձևակերպումների առանձնահատկությունները,
- ուսումնասիրել և վերհանել հարկադիր վերակազմակերպման իրավական կարգավորման հիմնախնդիրները և դրա ազդեցությունը կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց, նրանց մասնակիցների և պարտատերերի իրավունքների վրա,
- դիտարկել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման գործընթացի ազդեցությունը շուկաներում բնականոն մրցակ-

© National Library of Armenia

ցության վրա,

- քննարկել վերակազմակերպվող կորպորատիվ տիպի իրավաբանական անձի, նրա մասնակիցների և պարտատերերի իրավունքների պաշտպանության խնդիրները,
- ներկայացնել և հիմնավորել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպումը կարգավորող օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են հանդիսանում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման կապակցությամբ առաջացող հարաբերությունները՝ տնտեսական ընկերությունների օրինակով, իսկ առարկան՝ վերակազմակերպումը և դրա իրավական կարգավորման հիմնախնդիրները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հայրենական քաղաքացիական իրավունքը հարուստ չէ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման վերաբերյալ տեսական ուսումնասիրություններով և գիտական մոտեցումներով: Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման հիմնահարցերին բազմակողմանի և համընդգրկուն կերպով անդրադարձել է միայն պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանը իր «Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով)» մենագրությունում, որում բացահայտվել են ոլորտում առկա մի շարք հիմնախնդիրներ, դրանց լուծման ընդհանուր ուղղություններ և հնարավորություն ընձեռել վեր հանված հիմնահարցերի շուրջ կատարել առավել խորը և համակողմանի գիտագործնական ուսումնասիրություն:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել ինչպես հայրենական հեղինակների, այնպես էլ ռուս, գերմանացի, անգլիացի հեղինակների աշխատություններ: Հայաստանյան հեղինակներից ուսումնասիրվել է պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյանի «Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով)» դոկտորական ատենախոսությունը, քննարկվող թեմային, ինչպես նաև դրա հետ համակարգային կապի մեջ գտնվող այլ թեմաներին վերաբերող նրա տարբեր աշխատություններ և գիտական հոդվածներ, պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյանի «Գործարարական իրավունք» դասագիրքը և այլ աշխատություններ, ինչպես նաև այլ գիտնականների հեղինակած աշխատանքներ: Արտասահմանյան հեղինակներից ուսումնասիրվել են Յ.Կ. Տոլստոյի, Վ.Վ. Վիտրյանսկու, Ս.Ն. Բրատուսի, Վ.Ա. Բելովի, Ե.Ա. Սուխանովի, Դ.Վ. Ժդանովի, Ֆ.Կ. Սավինեի, Ա.Ֆ. Բրինցի, Ջ. Հիերինգի, Ռ. Սալեյլի, Բորկի, Դ. Արմենտաուի, Ջ. Աշերի, Հ. Կալմեյերի և բազմաթիվ այլ հեղինակ-

© National Library of Armenia

ների աշխատություններ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել Քաղաքացիական օրենսգիրքը, առանձին կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձանց վերաբերյալ հատուկ օրենքները, տնտեսական մրցակցության պաշտպանության և բանկային գործունեության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, դատական պրակտիկան, Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Մեծ Բրիտանիայի Թագավորության, Ֆրանսիայի՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերը և դատական պրակտիկան:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտության մեթոդոլոգիական հիմքն են կազմել ինչպես օբյեկտիվ իրականության ընկալման համագիտական, այնպես էլ հատուկ գիտական մեթոդները՝ դիալեկտիկական, պատմական, դեդուկցիան և ինդուկցիան, համեմատական-իրավական, համակարգակառուցվածքային, վիճակագրական և այլն: Հետազոտության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել իրավահամեմատական և համակարգակառուցվածքային մեթոդներին: Թվարկված մեթոդներն իրենց ամբողջության մեջ թույլ են տվել հնարավորինս լուծել հետազոտությամբ հետապնդվող նպատակների համար առաջադրված գիտական խնդիրները:

Ատենախոսության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել հնարավորինս բազմակողմանի և համալիր քննարկել և վերլուծել կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման ինստիտուտի տեսական և գործնական հիմնախնդիրները: Նշված վերլուծությունները կատարվել են Քաղաքացիական օրենսգրքի, կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց առանձին կազմակերպաիրավական ձևերի հետ կապված իրավահարաբերությունները կանոնակարգող հատուկ օրենքների, այլ իրավական ակտերի, արտասահմանյան մի շարք երկրների համանման օրենսդրության համեմատաիրավական ուսումնասիրության, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատական ակտերի, արտասահմանյան երկրների դատական պրակտիկայի, տեսության մեջ արտահայտված կարծիքների համակարգային վերլուծության հիման վրա: Հետազոտվել են հայրենական գիտական գրականության մեջ դեռևս չուսումնասիրված կամ ոչ ամբողջովին ուսումնասիրված այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են հարկադիր վերակազմակերպման ինստիտուտը, վերակազմակերպման գործընթացի՝ բնականոն մրցակցութ-

© National Library of Armenia

յան վրա ունեցած ազդեցությունը, բանկերի միացման ոլորտում միացող բանկի մասնակիցների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները և այլն: Նշվածի արդյունքում կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել են օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը ակնհայտորեն դրսևորվում է պաշտպանության ներկայացվող դրույթներում և օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Քաղաքացիական օրենսգիրքը հստակ չի բանաձևում վերակազմակերպման ձևերի էությունը, կարգավորում է միայն վերակազմակերպման սկզբի, վերջնարդյունքի և փաստաթղթային ձևակերպումների հետ կապված հարաբերությունները, չի անդրադառնում վերակազմակերպվող իրավաբանական անձի և նրա մասնակիցների իրավունքների պաշտպանության հարցերին, ինչը կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց և դրանց վերակազմակերպման առանձնահատկություններով և էական տարբերություններով պայմանավորված կարող է վնասել կորպորացիայի շահերին և խախտել դրա մասնակիցների իրավունքները: Բացի այդ, առանձին կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքները (օրինակ՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» և «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքները) վերակազմակերպման ընթացակարգեր չեն նախատեսում և հղում են կատարում Քաղաքացիական օրենսգրքին, ինչը նման իրավական անորոշության պայմաններում կարող է հանգեցնել վերակազմակերպման այս կամ այն ձևի ոչ ճիշտ ընկալմանը և կիրառմանը դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Միաժամանակ, վերակազմակերպման ձևերի հասկացությունների բացակայության արդյունքում կորպորացիաների վերակազմակերպումը, շատ դեպքերում, ըստ էության, վերածվում է բաժնետոմսերի (բաժնեմասերի) առուվաճառքի, զրկում վերակազմակերպվող կորպորացիայի մասնակիցներին վերակազմակերպման արդյունքում ստեղծված կազմակերպությունում մասնակցության իրավունքից՝ հանգեցնելով կորպորացիայի վերակազմակերպման դեպքում նրա մասնակիցների կազմի անփոփոխելիության սկզբունքի խախտման:

Վերը նշված խնդիրները լուծելու նպատակով կատարված ուսումնասիրության արդյունքում կորպորացիաներին բնութագրական հատկանիշների հիման վրա վերհանվել են նրանց վերակազմակերպման առանձնահատկությունները և առաջարկվել է Քաղաքացիական օրենսգրքով սահմանել վերակազմակերպման ձևերի հասկացությունները (վերակազմակերպման բո-

© National Library of Armenia

լոր ձևերի հասկացությունները ներկայացված են եզրակացության 4-րդ կետում), որոնք կարող են հավասարապես վերաբերել ինչպես կորպորատիվ, այնպես էլ ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկադիր վերակազմակերպումը հանդիսանում է կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց նկատմամբ ներգործության բացառիկ միջոց, հանգեցնում է ոչ միայն կորպորացիայի, այլ նաև նրա մասնակիցների իրավունքների էական սահմանափակմանը, քանի որ հարկադիր վերակազմակերպման վերաբերյալ դատարանի վճռի հիման վրա կորպորացիայի մասնակիցները զրկվում են նրա կառավարմանը մասնակցելու իրավունքից, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկադիր վերակազմակերպմանը վերաբերող իրավակարգավորումները խիստ անորոշ են և ոչ ամբողջական, առաջացնում են հարկադիր վերակազմակերպման ինստիտուտի ընկալման, մեկնաբանման և կիրառման խնդիրներ՝ հարկադիր վերակազմակերպման գործնական կիրառման արդյունքում կորպորացիայի և նրա մասնակիցների իրավունքների անհամաչափ սահմանափակումը բացառելու նպատակով և հիմք ընդունելով, որ հարկադիր վերակազմակերպումը կիրառվում է մրցակցային օրենսդրության խախտումների դեպքում՝ առաջարկվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

ա) ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին վերապահել տնտեսվարող սուբյեկտի հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելու լիազորությունը,

բ) սահմանել գերիշխող դիրքը մեկ տարվա ընթացքում երկու կամ ավելի անգամ չարաշահած սուբյեկտի նկատմամբ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից հարկադիր վերակազմակերպման (ապախոշորացման) վերաբերյալ որոշում ընդունելու չափորոշիչները: Որպես ընդունելի և միջազգային պրակտիկայում լայնորեն ընդունված չափորոշիչներ առաջարկվել են հետևյալ երկու չափանիշները, որոնք հարկավոր է գնահատել իրենց համակցության մեջ՝

1) գոյություն ունի կազմակերպության ենթակառուցվածքների առանձնացման իրական հնարավորություն,

2) վերակազմակերպման արդյունքում ստեղծվող կազմակերպություններն ունեն իրական հնարավորություն ինքնուրույն գործելու ապրանքային շուկայում:

3. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձիք, հատկապես տնտեսական ընկերությունները հանդիսանում են շուկայական հարաբերությունների հիմնական մասնակիցները, ազ-

© National Library of Armenia

դում են շուկայի կառուցվածքի վրա, թելադրում են դրա գործառման հիմնական կանոնները, որի արդյունքում նաև նրանց վերակազմակերպման գործընթացները ազդեցություն են ունենում բնականոն տնտեսական մրցակցության վրա՝ կատարված ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (միացումը և միաձուլումը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով համարվում են համակենտրոնացման տեսակներից) համակենտրոնացման տեսակները սահմանելիս տնտեսվարող սուբյեկտների՝ որևէ ապրանքային շուկայում գործելու պարտադիր նախապայմանը հիմք ընդունելու, ինչպես նաև հայտարարագրման համար անհրաժեշտ ակտիվի կամ հասույթի շեմերը համակենտրոնացմանը նախորդող տարվա ցուցանիշների հետ պայմանավորելու արդյունքում հնարավոր չի լինում որոշել համակենտրոնացող, սակայն որևէ ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման տեսակը, իսկ համակենտրոնացման կայացման տարում ստեղծված և միացման կամ միաձուլման ձևով վերակազմակերպվող կորպորացիաները հայտարարագրման համար անհրաժեշտ ակտիվի կամ հասույթի շեմերը հաղթահարելու դեպքում դուրս են մնում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անհրաժեշտ վերահսկողության շրջանակներից: Նշվածի արդյունքում վերջիններս վերակազմակերպման կառուցակարգի կիրառման միջոցով կապիտալի կենտրոնացման և շուկայում մասնաբաժնի ավելացման արդյունքում հնարավորություն են ստանում միակողմանիորեն ազդել ապրանքաշրջանառության ընդհանուր պայմանների վրա, ձեռք բերել գերիշխող դիրք՝ նպաստելով շուկաներում կենտրոնացվածության աստիճանի բարձրացմանը և շուկա մուտքի խոչընդոտների առաջացմանը:

Ուստի, առաջարկվել է ապրանքային շուկայում գործելու հանգամանքը չդիտարկել պարտադիր նախապայման համակենտրոնացման տեսակը որոշելիս, իսկ որևէ ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը դիտարկել խառը համակենտրոնացում և «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանել, որ մեկ տարուց պակաս ժամանակահատվածով գործունեություն իրականացրած լինելու դեպքում համակենտրոնացման հայտարարագրման համար հիմք են ընդունվում համակենտրոնացմանը նախորդող ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տնտեսվարող սուբյեկտի ակտիվի արժեքի կամ ստացած հասույթի չափերը:

4. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերակազմավորման հիմքում ընկած «իրավաբանական անձի տեսակ» և «իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձև» իրավական եզրույթները ՀՀ օրենսդրությամբ

© National Library of Armenia

բացահայտված չեն, իսկ տեսության մեջ չկա դրանց էության և փոխհարաբերակցության վերաբերյալ միասնական մոտեցում, ինչպես նաև այն հանգամանքը, որ շատ դեպքերում նշված եզրույթները նույնացվում և օգտագործվում են միևնույն բովանդակությամբ՝ հանգեցնելով վերակազմավորման՝ որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևի ոչ ճիշտ ընկալման՝ կատարված ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ նշված եզրույթները հարաբերակցվում են ինչպես ընդհանուրն ու դրա մասը, քանի որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձի մեկ տեսակի մեջ կարող են լինել մի քանի կազմակերպաիրավական ձևեր: Նշվածի արդյունքում, չնայած տեսության մեջ ընդունելի այն տեսակետին, որ վերակազմավորումը միայն իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևի փոփոխությունն է, որը նույն բովանդակությամբ ամրագրվել է նաև օրենսդրությամբ, առաջարկվել է վերակազմավորման իրավական բովանդակության վերաբերյալ այլ մոտեցում, որի համաձայն վերակազմավորումը ոչ միայն կազմակերպաիրավական ձևի, այլ նաև իրավաբանական անձի տեսակի փոփոխությունն է:

5. Վերակազմավորման որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևի էության և առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմավորման դեպքում գերակայող է իրավաբանական բաղադրատարրը, քանի որ կորպորացիան կարող է վերակազմավորվել միայն օրենքով նախատեսված այլ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց, որի արդյունքում տեղի են ունենում կորպորացիայի գործառման հիմնական կանոնների զուտ իրավական փոփոխություններ, կորպորացիայի գույքի կազմը փոփոխության չի ենթարկվում, քաղաքացիաիրավական հարաբերություններում վերակազմավորման արդյունքում ստեղծված կորպորացիան հանդիսանում է իրավանախորդի բոլոր պարտավորությունների լիիրավ իրավահաջորդը, որի արդյունքում վերակազմակերպման ընթացքում կորպորացիայի պարտատերերի իրավունքների պաշտպանության անհրաժեշտություն, ըստ էության, չի առաջանում: Ուստի, առաջարկվել է Քաղաքացիական օրենսգրքով սահմանել, որ վերակազմավորման դեպքում պարտատերերը չեն կարող օգտվել իրավաբանական անձի վերակազմակերպմամբ պայմանավորված իրենց իրավունքներից, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավահաջորդ իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևը կամ տեսակը պարտատերերին չի տալիս այն իրավաբանական հնարավորությունները, որոնք տալիս էր իրավանախորդ կազմակերպության կազմակերպաիրավական ձևը կամ տեսակը:

6. Հարկադիր վերակազմակերպումը հետապնդում է հանրային շահերի ապահովման նպատակ, որի արդյունքում դրա անխոչընդոտ իրականացու-

© National Library of Armenia

մը օբյեկտիվորեն ապահովում է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ազատ տնտեսական մրցակցության սկզբունքի և շուկայում գերիշխող դիրքը չարաշահելու արգելքի իրացումը, իսկ ՀՀ օրենսդրությամբ վերակազմակերպվող իրավաբանական անձի պարտատերերին կամավոր և հարկադիր վերակազմակերպումների դեպքում միևնույն իրավունքների շրջանակ վերապահելը կարող է էապես խոչընդոտել վերը նշված սահմանադրական նպատակներին հասնելուն, քանի որ վերակազմակերպվող կորպորատիվ տիպի իրավաբանական անձի պարտատերերն ունեն վերակազմակերպման ընթացքի վրա ազդելու իրական հնարավորություն: Մյուս կողմից, առանց անհրաժեշտ ուշադրության չի կարող մնալ նաև վերակազմակերպվող կորպորացիայի պարտատերերի իրավունքների պաշտպանության օբյեկտիվ անհրաժեշտությունը՝ սեփականության իրավունքի պաշտպանության և պարտավորական հարաբերությունների կայունությունն ապահովելու տեսանկյունից: Ուստի, առաջարկվել է, որ հարկադիր վերակազմակերպման դեպքում պարտատերերը վերակազմակերպմամբ պայմանավորված իրենց պահանջները ներկայացնելիս չպետք է իրավունք ստանան պահանջելու նաև վերակազմակերպման գործընթացի կասեցում կամ դադարեցում, պարտատերերի կողմից ներկայացված պահանջները մինչև հարկադիր վերակազմակերպման ավարտը չբավարարվելու դեպքում այդ պահանջներով պարտավորությունները իրավահաջորդությամբ պետք է անցնեն հարկադիր վերակազմակերպման արդյունքում ստեղծված կազմակերպություններին, իսկ որոշակի պարտավորության մասով իրավահաջորդին որոշելու անհնարինության դեպքում բոլոր իրավահաջորդները պետք է կրեն համապարտ պատասխանատվություն:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կորպորացիաները հանդիսանում են առևտրային հարաբերությունների հիմնական մասնակիցները, որոնց շահութաբերությունը վարչական պատասխանատվության ենթարկվելու արդյունքում էականորեն նվազում է պատասխանատվության ենթարկված սուբյեկտի ներդրումային և գործարար գրավչության անկման և օտարերկրյա ներդրումներ ներգրավելու հնարավորությունների սահմանափակման արդյունքում՝ պատասխանատվության ենթարկված կորպորացիայի իրավահաջորդների և նրանց մասնակիցների իրավունքների պաշտպանության և նրանց նկատմամբ հնարավոր կիրառման ենթակա իրավական ակտերի կանխատեսելիությունն ապահովելու նպատակով առաջարկվել է՝

1) հստակեցնել վարչական պատասխանատվության իրավահաջորդության անցման պահը՝ վարչական պատասխանատվության իրավահաջորդ ճանաչելով ոչ միայն արդեն իսկ բացահայտված իրավախախտման համար պատասխանատու և վերակազմակերպված իրավաբանական անձի իրավա-

© National Library of Armenia

հաջորդներին, այլ նաև վարչական իրավախախտում կատարած և իրավախախտում կատարելուց հետո վերակազմակերպված իրավաբանական անձի իրավահաջորդներին այն դեպքում, երբ իրավախախտումը բացահայտվել է իրավաբանական անձի վերակազմակերպվելուց հետո:

2) սահմանել, որ իրավաբանական անձի բաժանման դեպքում վարչական պատասխանատվության ենթակա է այն իրավաբանական անձը, որին, ըստ բաժանիչ հաշվեկշռի, անցել է այն ապրանքներն իրացնելու, ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու իրավունքը, որոնց շրջանառության ոլորտում կատարվել է իրավախախտումը, դրա անհնարինության դեպքում՝ այն իրավաբանական անձը, որին ըստ բաժանիչ հաշվեկշռի անցել է գույքի առավել մեծ մասը՝ արժեքային արտահայտությամբ, գույքի հավասարաչափ բաժանման դեպքում՝ իրավահաջորդ բոլոր իրավաբանական անձինք, իսկ եթե հնարավոր չէ որոշել փոխանցված գույքի համամասնությունը, ապա իրավահաջորդները պետք է կրեն համապարտ պատասխանատվություն:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ ատենախոսության մեջ վերլուծված և առաջ քաշված եզրահանգումները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն քաղաքացիական իրավունքի համար, այլ նաև իրավունքի գիտության համար ընդհանրապես: Աշխատանքի արդյունքներն իրենց ամբողջության մեջ համարվում են հեղինակի ներդրումը քաղաքացիաիրավական տեսության մեջ, հատկապես վերակազմակերպման, դրա անքակտելի հատկանիշ համարվող իրավահաջորդության ինստիտուտների իրավական էության բացահայտման, վերակազմակերպման առանձին ձևերի իրավական կարգավորման առանձնահատկությունների և վերակազմակերպման գործընթացում շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության հարցերի խորքային ուսումնասիրության համատեքստում: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել վերակազմակերպման ինստիտուտին առնչվող խնդիրների վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների ընթացքում:

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ հետազոտության մեջ ներկայացված եզրակացությունները և դիտարկումները կարող են գործնականում իրացվել իրավաստեղծ գործունեության ոլորտում օրենսդրության բացերը, թերություններն ու հակասությունները վերացնելու համար, դրականորեն ազդել իրավակիրառ պրակտիկայի վրա՝ բարձրացնելով համապատասխան հասարակական հարաբերությունների սուբյեկտների մասնագիտական գործունեության արդյունավետությունը:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը

© National Library of Armenia

պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ամփոփված ընդհանուր առմամբ յոթ պարագրաֆներից և օգտագործված իրավական ակտերի և գրականության ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ինչպես նաև հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլխի վերտառությունն է **«Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման հասկացությունը»**, որը բաղկացած է երկու պարագրաֆներից:

«Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց հասկացությունը և դրանց վերակազմակերպման էությունը» վերտառությամբ 1-ին պարագրաֆում կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց բնութագրական հատկանիշների հիման վրա վերհանվել են այդ տեսակի իրավաբանական անձանց վերակազմակերպման առանձնահատկությունները, որոնք հիմք են ընդունվել ատենախոսության հետագա պարագրաֆները շարադրելիս:

«Վերակազմակերպումը որպես իրավաբանական անձանց ստեղծման և դադարման ձև» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում վերակազմակերպման վերաբերյալ տեսության մեջ արտահայտված տարբեր տեսակետների և հայեցակարգերի թեր և դեմ կողմերի վերհանման արդյունքում բացահայտվել է վերակազմակերպման իրավական էությունը, հիմնավորվել է վերակազմակերպման արդյունքում իրավահաջորդության համապարփակ լինելու հանգամանքը: Առանձին քննարկման առարկա են դարձել նաև կորպորացիաների վերակազմակերպման արդյունքում քաղաքացիական և վարչական պատասխանատվության իրավահաջորդության հիմնախնդիրները և ներկայացվել են օրենսդրության կատարելագործման առաջարկություններ:

Երկրորդ գլխի վերտառությունն է **«Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման առանձին ձևերի իրավական կարգավորումը»,** որը բաղկացած է երեք պարագրաֆներից:

© National Library of Armenia

«Միացումը և միաձուլումը որպես վերակազմակերպման համախմբող ձևեր» վերտառությամբ 1-ին պարագրաֆում վերհանվել են միացման և միաձուլման բնութագրական հատկանիշները, դրանց հիման վրա ձևակերպվել են միացման և միաձուլման հասկացությունները: Կատարված ուսումնասիրությամբ հիմնավորվել է նաև, որ միացման և միաձուլման պայմանագրերը հանդիսանում են կորպորատիվ պայմանագրեր: Առանձին քննարկման առարկա է դարձել նաև բնականոն մրցակցային հարաբերությունների վրա միացման և միաձուլման ունեցած ազդեցությունը և ներկայացվել են մրցակցային օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

«Բաժանումը և առանձնացումը որպես վերակազմակերպման ապահոչորացնող ձևեր» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում վերլուծվել են բաժանման և առանձնացման առանձնահատկությունները, որոնց հիման վրա բանաձևվել են դրանց ընդհանուր հասկացությունները: Նշված պարագրաֆի շրջանակներում կորպորացիաների հարկադիր վերակազմակերպման վերաբերյալ գիտական մոտեցումների, օրենսդրական կարգավորումների և դատական պրակտիկայի վերլուծության արդյունքում վերհանվել են հարկադիր վերակազմակերպման հիմքերին, ընթացակարգերին ու դրա արդյունքում կորպորացիայի ու նրա մասնակիցների իրավունքների պաշտպանությանը վերաբերող հիմնախնդիրներ և ներկայացվել են դրանց լուծման առաջարկություններ:

«Վերակազմավորման իրավական կարգավորման առանձնահատկությունները» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում վերակազմավորման՝ որպես վերակազմակերպման ինքնուրույն ձևի ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ այն առանձնահատուկ տեղ է գրավում վերակազմակերպման ձևերի շարքում, քանի որ կորպորացիայի վերակազմավորման արդյունքում տեղի են ունենում կազմակերպության գործառման հիմնական կանոնների զուտ իրավական փոփոխություններ, այն դեպքում, երբ միացման կամ միաձուլման հիմնական նպատակը տնտեսվարող սուբյեկտի կապիտալի միավորումն է, իսկ բաժանման և առանձնացման դեպքում՝ բիզնեսի բաժանումը և կազմակերպության ապախոշորացումը:

«Շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը վերակազմակերպման գործընթացում» վերտառությամբ երրորդ գլուխը բաղկացած է երկու պարագրաֆներից:

«Պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը վերակազմակերպման գործընթացում» վերտառությամբ 1-ին պարագրաֆում ներկայացվել են վերակազմակերպման գործընթացում առաջացող պարտատերերի իրավունքների պաշտպանության հիմնական

© National Library of Armenia

խնդիրները, քննարկվել են պարտատերերի իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգեր ներդնելու վերաբերյալ տեսության մեջ արտահայտված մոտեցումները, Առանձնահատուկ քննարկման առարկա են դարձել հարկադիր վերակազմակերպման դեպքում պարտատերերի իրավունքների պաշտպանության կամավոր վերակազմակերպման դեպքերից տարբերվող կառուցակարգեր նախատեսելու հիմնախնդիրները, որոնց քննարկման արդյունքում ներկայացվել են օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

«Վերակազմակերպվող իրավաբանական անձի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում վերլուծության են ենթարկվել վերակազմակերպվող իրավաբանական անձի մասնակիցների իրավունքների պաշտպանության օրենսդրական կառուցակարգերը և տեսական մոտեցումները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կորպորացիայի փոքրամասնություն կազմող մասնակիցների իրավունքների պաշտպանության խնդիրներին: Նշված պարագրաֆի շրջանակներում վերհանվել են նաև բանկերի միացման գործընթացում միացող բանկի փոքրամասնություն կազմող մասնակիցների իրավունքների պաշտպանության օրենսդրական մեխանիզմների մի շարք թերություններ և առաջարկվել են դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Եզրակացությունում ամփոփելով կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունը՝ ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկություններն ու եզրահանգումները:

1. Վերակազմակերպման իրավական բովանդակության, գիտության մեջ առկա տարբեր տեսությունների, ինչպես օրենսդրության ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ վերակազմակերպումը հանդիսանում է իրավաբանական անձի ստեղծման և (կամ) դադարման ընթացակարգ, որի արդյունքում իրավանախորդ իրավաբանական անձի իրավունքներն ու պարտավորությունները համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են վերակազմակերպման արդյունքում ստեղծված (պահպանված) իրավաբանական անձին և (կամ) անձանց:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության և տեսության ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ իրավահաջորդությունը պետք է համարել համապարփակ, այդ թվում՝ առանձնացման դեպքում, քանի որ վերակազմակերպման բոլոր ձևերի դեպքում տեղի է ունենում իրավունքների և պարտականությունների փոխանցում (այլ ոչ թե միայն իրավունքի կամ միայն պարտականության) ամբողջությամբ կամ մի

© National Library of Armenia

մասով:

3. Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց բնութագրական հատկանիշների հիման վրա վերհանվել են դրանց վերակազմակերպման հետևյալ առանձնահատկությունները՝

- կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց մասնակիցներն ունեն կորպորացիայի կառավարմանը մասնակցելու իրավունք, որը դրսևորվում է նաև վերակազմակերպման որոշումների կայացմանը մասնակցելու միջոցով, իսկ նման որոշմանը դեմ քվեարկած մասնակիցները կորպորացիայի նկատմամբ ձեռք են բերում պահանջի իրավունք,
- կորպորացիայի՝ նաև գույքային միություն հանդիսանալու հանգամանքը պայմանավորում է վերակազմակերպման դեպքում գույքը իրավահաջորդների միջև բաժանելու հարցի պարզման անհրաժեշտությունը,
- կորպորացիայի վերակազմակերպման դեպքում տեղի է ունենն բաժնետոմսերի (բաժնեմասերի) փոխարկում,
- վերակազմակերպման արդյունքում վերակազմակերպվող կազմակերպության մասնակիցները պահպանում են վերակազմակերպման արդյունքում ստեղծված կազմակերպությունում մասնակցության իրավունքը,
- կորպորատիվ տիպի իրավաբանական անձիք կարող են վերակազմավորվել միայն օրենքով նախատեսված այլ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց,
- կարգավորվող ոլորտներում (բանկեր, ապահովագրական, ներդրումային կազմակերպություններ) գործող կորպորացիաների վերակազմակերպումը ենթարկվում է հատուկ իրավական կարգավորումների:

4. Առաջարկվել է Քաղաքացիական օրենսգրքով սահմանել վերակազմակերպման ձևերի հետևյալ հասկացությունները, որոնք կարող են վերաբերել նաև ոչ կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց.

Միաձուլումը երկու կամ ավելի իրավաբանական անձանց այնպիսի միավորումն է, որի արդյունքում ստեղծված նոր իրավաբանական անձին համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են միավորված և գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները, իսկ միաձուլված իրավաբանական անձանց մասնակիցները (անդամները) պահպանում են նոր ստեղծված կազմակերպությունում մասնակցության իրավունքը:

Միացումը մեկ իրավաբանական անձի մեկ այլ իրավաբանական անձի հետ այնպիսի միավորումն է, որի արդյունքում միավորված և գործունեությունը դադարեցրած իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են մյուս իրավաբանական անձին, իսկ միացած կազմակերպության մասնակիցները

© National Library of Armenia

(անդամները) պահպանում են այդ կազմակերպությունում մասնակցության իրավունքը:

Բաժանումը մեկ իրավաբանական անձի դադարման արդյունքում երկու կամ ավելի իրավաբանական անձանց ստեղծումն է, որի արդյունքում դադարած իրավաբանական անձի բոլոր իրավունքներն ու պարտականությունները համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են բաժանման արդյունքում ստեղծված իրավաբանական անձանց, դադարած իրավաբանական անձի մասնակիցները (անդամները) պահպանում են նոր ստեղծված կազմակերպությունում մասնակցության իրավունքը:

Առանձնացումը վերակազմակերպման միջոցով նոր իրավաբանական անձի ստեղծումն է, որին անցնում է վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքների և պարտականությունները մի մասը՝ առանց վերակազմակերպված իրավաբանական անձի դադարման, վերակազմակերպված իրավաբանական անձի մասնակիցները (անդամները) պահպանում են նոր ստեղծված կազմակերպությունում մասնակցության իրավունքը:

Վերակազմավորումը իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևի կամ տեսակի փոփոխությունն է, որի արդյունքում վերակազմակերպվող իրավաբանական անձի բոլոր իրավունքները և պարտականությունները համապարփակ իրավահաջորդությամբ անցնում են նոր ստեղծված այլ տեսակի կամ այլ կազմակերպաիրավական ձև ունեցող իրավաբանական անձին, իսկ վերակազմավորված իրավաբանական անձի մասնակիցները (անդամները) պահպանում են նոր ստեղծված կազմակերպությունում մասնակցության իրավունքը:

5. Միաձուլման (միացման) պայմանագրի համալիր ուսումնասիրությունը և դրա իրավական բնույթի ու բովանդակության վերաբերյալ առկա տեսությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած դրա բնույթի վերաբերյալ բազմաթիվ մոտեցումների առկայությանը՝ առավել հիմնավորված պետք է համարել այն տեսակետը, որ միացման պայմանագիրը իրենից ներկայացնում է քաղաքացիաիրավական պայմանագիր, իսկ հաշվի առնելով, որ դրանով կարգավորվում են կորպորատիվ իրավահարաբերություններ, ապա այն պետք է համարել կորպորատիվ պայմանագիր:

6. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածում նշված է, որ միաձուլմանը (միացմանը) մասնակցող կողմերի հայեցողությամբ (միաձուլման (միացման) պայմանագիրը պետք է բովանդակի՝… «է» այլ տեղեկություններ՝ միաձուլմանը (միացմանը) մասնակցող կողմերի հայեցողությամբ): Նշված ձևակերպումն ունի ներքին իրավական հակասություն, քանի որ մի կողմից «այլ տեղեկությունները» պետք է նշվեն պայմանագրում, մյուս կողմից դրանք պետք է նշվեն միացմանը մասնակցող

© National Library of Armenia

կողմերի հայեցողությամբ:

Ներկայացված իրավական հակասությունը լուծելու նպատակով առաջարկվել է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «միաձուլման պայմանագիրը կարող է պարունակել նաև այլ տեղեկություններ՝ միաձուլմանը (միացմանը) մասնակցող կողմերի հայեցողությամբ:»:

7. Միացումներն ու միաձուլումներ իրավական բովանդակության վերլուծությունը և տարբեր երկրներում դրանց վերաբերյալ առկա իրավակարգավորումները ցույց են տալիս, որ միացումը կամ միաձուլումը կարող են էապես ազդել նաև շուկաներում բնականոն և ազատ մրցակցության մակարդակի վրա, մասնավորապես՝ դրանց արդյունքում կարող են առաջանալ գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներ կամ սահմանափակվել տնտեսական մրցակցությունը: Նման բացասական հետևանքների կանխման և նախականխման նպատակով էլ պետությունը սահմանել է անհրաժեշտ կառուցակարգեր՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսելով համակենտրոնացման ինստիտուտը: Նշված ինստիտուտի ներդրման ու կարգավորման ազգային և արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ դեպքերում, երբ կորպորացիան ձեռք է բերում մեկ այլ կազմակերպության կանոնադրական կապիտալում հարյուր տոկոս մասնակցություն՝ դառնալով միակ մասնակից կամ էական մասնակցություն՝ ձեռք բերելով այդ կորպորացիայի որոշումները կանխորոշելու իրական հնարավորություն, սահմանափակվում է վերջինի տնտեսական գործունեության ազատությունը, որի արդյունքում նշված տնտեսվարող սուբյեկտը զրկվում է ազատորեն գործելու հնարավորությունից: Այս ամենի արդյունքում առաջարկվել է «փաստացի միացման» գաղափարը, որն անփոփոխ է նկարագրված իրողությունը:

8. Հարկադիր վերակազմակերպման վերաբերյալ ներպետական և արտասահմանյան օրենսդրության վերլուծությունը և համադրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հարկադիր վերակազմակերպումը իրականացվում է այն դեպքերում, երբ որևէ կազմակերպություն թույլ է տալիս օրենքի, հիմնականում մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտում: Ուստի, նշված հարկադրանքի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է, որպեսզի իրավախախտ սուբյեկտը հնարավորություն չունենա ազդելու գործընթացի վրա, որոշելու դրա հետագա ընթացքը: Այդ նպատակներին հնարավոր է հասնել այն դեպքում, երբ կորպորացիայի վերակազմակերպումն իրականացվում է առանց նրա մասնակցության կամ առանց նրա կողմից որոշումներ կայացնելու հնարավորության, ինչպիսի ընթացակարգ համարվում է Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով նախատեսված ընթացա-

© National Library of Armenia

կարգը, երբ դատարանը նշանակում է իրավաբանական անձի արտաքին կառավարիչ և նրան հանձնարարում է իրականացնել իրավաբանական անձի վերակազմակերպում և նշանակման պահից իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորություններն անցնում են արտաքին կառավարչին:

9. Հարկադիր վերակազմակերպմանը վերաբերող իրավակարգավորումների անորոշությունը պրակտիկայում առաջացնում է դրանց ընկալման և մեկնաբանման հետ կապված խնդիրներ: Մասնավորապես, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ կազմակերպության մասնակիցները դիմում են դատարան դրա հարկադիր վերակազմակերպման պահանջով տարաբնույթ պատճառներով (օրինակ, երբ նրանք կողմ են քվեարկել վերակազմակերպմանը, սակայն որոշումը չի ընդունվել): Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվել է, որ հարկադիր վերակազմակերպման իրականացման հիմքերը սահմանված են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և հարկադիր վերակազմակերպումը կիրառվում է մրցակցային օրենսդրության խախտումների դեպքում՝ որպես հարկադրական ներգործության միջոց, հանգեցնում է կորպորացիայի և դրա մասնակիցների իրավունքների սահմանափակմանը, իսկ հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելու իրավասություն ունի միայն ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը, իսկ իրավաբանական անձի պարտատերերը, մասնակիցները կամ մրցակիցները նման իրավունք չունեն:

10. Առաջարկվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը 1-ին մասի «դ» կետը լրացնել գերիշխող դիրքը մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ չարաշահած և արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դրած տնտեսվարող սուբյեկտների հարկադիր վերակազմակերպման պահանջով դատարան դիմելու ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի իրավասությամբ:

11. Կատարված ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ բոլոր այն դեպքերում, երբ վերակազմակերպվող կորպորացիայի պարտատերերը սահմանված ժամկետում չեն իրացնում պարտապան իրավաբանական անձի վերակազմակերպմամբ պայմանավորված իրավունքները, նրանք համաձայնվում են վերակազմակերպվող իրավաբանական անձի հետ ունեցած պարտավորական հարաբերությունները շարունակել վերջինիս իրավահաջորդի հետ նույն պայմաններով կամ պարտատիրոջ և նոր պարտապանի միջև համաձայնեցված այլ ձևով, որի արդյունքում այլևս չեն կարող օգտվել պարտապան կազմակերպության վերակազմակերպմամբ պայմանավորված իրենց

© National Library of Armenia

իրավունքներից:

12. Վերակազմակերպման գործընթացում կորպորացիայի մասնակիցների իրավունքի առավել արդյունավետ պաշտպանության, իրավական որոշակիության և իրավական ակտի կանխատեսելիության սահմանադրաիրավական սկզբունքների ապահովման նպատակով առաջարկվել է օրենքով սահմանել, որ մինչև վերակազմակերպման ավարտը (պետական գրանցումը) վերակազմակերպման մասին ընդհանուր ժողովի որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ հայցադիմումը դատարանի կողմից վարույթ ընդունելը կասեցնում է վերակազմակերպման հետագա ընթացքը մինչև տվյալ հարցով դատարանի՝ գործն, ըստ էության, լուծող դատական ակտի ուժի մեջ մտնելը:

13. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կենտրոնական բանկի 2011 թվականի հուլիսի 19-ի «Բանկերի միացման կարգը հաստատելու մասին» թիվ 190-Ն որոշմամբ սահմանված միացող բանկի մասնակիցներին իրենց պատկանող բաժնետոմսերի դիմաց դրամական հատուցում տրամադրելու վերաբերյալ կարգավորումները խաթարում են վերակազմակերպման էությունը, չեն ապահովում ողջամիտ հավասարակշռություն բանկի կորպորատիվ շահերի և բանկի մասնակիցների իրավունքների պաշտպանության երաշխիքների միջև և դրա արդյունքում, ըստ էության, իրական հնարավորություն է ստեղծվում պահպանվող բանկի բաժնետերերի համար միացող բանկի բաժնետոմսերը ձեռքբերելու միջոցով զրկելու «անցանկալի բաժնետերերին» պահպանվող բանկի կանոնադրական կապիտալում հետագա մասնակցության իրավունքից՝ առաջարկվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-Ն որոշմամբ սահմանել, որ միացման պայմանագրով կարող է նախատեսվել միացող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց պահպանվող բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) տրամադրում, այլ արժեթղթերի տրամադրում՝ բացառելով միացող բանկի բաժնետերերին դրամական հատուցում տրամադրելու հնարավորությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրամական հատուցում ստանալու պահանջ ներկայացրել է հենց միացող բանկի մասնակիցը:

14. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հուլիսի 19-ի թիվ 190-Ն որոշմամբ բանկի կողմից միացման կարգում միացող բանկի բաժնետերերին դրամական (փողային) հատուցման տրամադրում կամ դրամական հատուցում և թիվ 190-Ն որոշման նախատեսված այլ եղանակների համակցություն նախատեսելու դեպքում վերակազմակերպման վերաբերյալ որոշման քվեարկությանը չմասնակցած կամ դեմ քվեարկած մասնակիցների՝ բաժնեմասի հետգնում պահանջելու իրավունքը չի կարող համարվել բավարար երաշխիք, քանի որ առանց դրա էլ նրանք ստանալու են դրամական հատուցում, որի արդյունքում բաժնետերը չցանկանալով մտնել դատական

© National Library of Armenia

գործընթացների մեջ և գիտակցելով, որ դրամական հատուցումը քիչ թե շատ ողջամիտ է, դեմ չի քվեարկի իր իրավունքներն ըստ էության խախտող որոշման դեմ:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հովհաննիսյան Ա. «Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման ազդեցությունը շուկաներում բնականոն մրցակցության ապահովման տեսանկյունից (իրավական ասպեկտները)» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2015, էջեր 158-178:
2. Հովհաննիսյան Ա. «Քաղաքացիական և վարչական պատասխանատվության իրավահաջորդությունը կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման արդյունքում» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջեր 132-146:
3. Ավետիսյան Վ., Հովհաննիսյան Ա. «Միացման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցների իրավունքների պաշտպանության որոշ հիմնահարցեր» // Դատական իշխանություն, հունվար-փետրվար 1-2 (211-212), 2017, էջեր 60-67:
4. Հովհաննիսյան Ա. «Իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպման որոշ հիմնախնդիրներ Հայաստանի Հանրապետությունում» // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2017, էջեր 147-171:
5. Հովհաննիսյան Ա. «Վերակազմակերպվող կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց պարտատերերի իրավունքների պաշտպանության որոշ հիմնահարցեր» // Պետություն և իրավունք, թիվ 1 (75) Եր., 2017, էջեր 38-47:

© National Library of Armenia

РЕЗЮМЕ

ОГАННИСЯН АРСЕН ВОЛОДЯЕВИЧ

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ РЕОРГАНИЗАЦИИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ КОРПОРАТИВНОГО ТИПА ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (НА ПРИМЕРЕ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ)

Юридические лица корпоративного типа, в частности хозяйственные общества, являются основными участниками экономических отношений, а в настоящих условиях участия Республики Армения в международных экономических интеграционных процессах, с целью развития национальной экономики, защиты прав всех участников рыночных отношений, современное гражданское законодательство должно быть склонно обеспечить такие благоприятные условия применения для подобных хозяйствующих субъектов, благодаря которым последние смогут быстрее адаптироваться к изменениям внешней и внутренней экономической среды, а также структуры рынка. Реорганизация считается одним из инструментов такой адаптации и перестройки бизнеса.

В настоящее время реорганизация юридических лиц корпоративного типа является широко распространенным корпоративным процессом, с помощью которого хозяйственным обществам удается достичь улучшения финансовых и организационных основ своего бизнеса. С помощью процесса реорганизации сохраняется стабильность гражданского оборота, обеспечивается полное правопреемство прав и обязательств к третьим лицам, по возможности гарантируются права кредиторов юридических лиц, сокращаются расходы ресурсов времени, производственный капитал не распределяется между участниками юридических лиц и не выходит из гражданского оборота. В результате вышеуказанного структура реорганизации приводит к более значительным организационным и финансовым результатам. Выбор какой-либо формы реорганизации по желанию юридического лица обусловлен тем, что это повышает эффективность управления организацией, делает ее более привлекательной для инвестиций, приобретает новые активы, создает новый правовой субъект на основе существующих активов и имущества, разрешает существующие корпоративные споры между участниками организации, и.т.д.

Гражданский кодекс Республики Армения и специальные законы об отдельных организационно-правовых формах юридических лиц

© National Library of Armenia

корпоративного типа не обеспечивают такой уровень регулирования процесса реорганизации, в условиях которых, с помощью структуры реорганизации, последние будут иметь возможность более эффективно достигать таких целей, для которых был установлен процесс реорганизации.

Гражданский кодекс Республики Армения не содержит понятий реорганизационных форм, регулирует только отношения, связанные с началом реорганизации, окончательного результата и документарных оформлений, никогда не затрагивает проблемы, связанные с юридическим лицом, находящимся в процессе реорганизации, прав участников и их защиты, и затрагивает права кредиторов в обобщенном и неопределенном порядке. Учитывая особенности корпорации, ее реорганизация существенно отличается от реорганизации некорпоративных юридических лиц как процессом осуществления, так и необходимостью защиты прав корпорации и участников, а регулирования, предусмотренные гражданским кодексом РА и законами и прочими правовыми актами об отдельных видах юридических лиц корпоративного типа не предоставляют такую возможность. Законы о юридических лицах корпоративного типа отдельной организационно-правовой формы не предусматривают процессы реорганизации и ссылаются на гражданский кодекс, что делает обсуждаемый вопрос более актуальным, а его решение более чем срочным.

Основные вопросы, относящиеся к принудительной реорганизации, не достаточно изучены, а существующие законодательные регулирования в ходе его практической реализации, могут создать множество проблем по защите прав корпорации и ее участников. Правовые структуры реорганизации, по оценке возможных воздействий для естественной конкуренции на рынке и предотвращения отрицательного воздействия также не находятся на должном уровне.

В результате вышеуказанных наблюдений, предметом изучения диссертации стали отношения, формирующиеся в связи с реорганизацией юридичесих лиц корпоративного типа по примеру хозяйственных обществ, а также реорганизация и основные вопросы по правовому регулированию.

В диссертации проведен анализ судебной практики, относящейся к указанным проблемам, а также сравнительный анализ законодательства и практики иностранных государств, что позволило выявить имеющиеся в Республике Армения проблемы в данной области и представить конкретные предложения изменения гражданского законодательства Республики Армения и совершенствования практики его применения.

© National Library of Armenia

Summary

ARSEN VOLODYA HOVHANNISYAN

LEGAL REGULATION OF REORGANIZATION OF CORPORATE LEGAL ENTITIES IN ACCORDANCE WITH THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA (AT AN EXAMPLE OF ECONOMIC SOCIETIES)

Corporate legal entities, especially the economic societies, are the principal participants of the economic relations and in the present terms of participation by the Republic of Armenia in international economic integration procedure and under the existing circumstances of the participation by the Republic of Armenia in the international economic integration procedure for the purpose of development of national economy, protection of rights of all the participants of the market-based relations the contemporary civil legislation shall adhere to provide such favourable conditions for operation of economic entities due to which the latter can quickly adapt to the amendment of the external and internal economic environment, as well as market structure. Reorganization is one of such tools for adaptation and business restructuring.

Currently reorganization of corporate legal entities is a widely-spread corporate procedure by means of which the economic companies can reach improvement of the financial and organizational grounds of their business. By means of reorganzation procedure the stability of civil turnover shall be retained, the full legal succession of the rights and obligations imposed to the third parties shall be provided, the rights of the creditors of the legal entities are guaranteed to the extent possible, the expenses of time resources are decreased, the production capital is not distributed between the participants of the legal entities and does not come out of the civil turnover. As a result of the aforementioned the reorganization structure brings to more significant organizational and financial results. At the discretion of the legal entitiy the choice of any form of reorganizeation is conditioned by increase of efficiency of organization management, by making it more attractive for investments, acquiring new assets, creating a new subject of right based on the assets and property, solution of the corporate disputes arising between the participants of the company.

The civil code of the Republic of Armenia and the special laws on separate legal organizational form of corporate legal entities do not provide such level of

© National Library of Armenia

regulation of reorganization procedure of corporate legal entities, under the conditions thereof by means of reorganzation structural procedure the latter will have the opportunity to reach the goals for which they initiated the reorganization procedure, more effectively.

The Civil Code of the Republic of Armenia does not comprise the concepts of reorganization forms, it only regulates the relations connected with the start of reorganization, final result and paperwork, does not touch upon the issues of the legal entities under reorganzation process, the rights of its participants and their protection, and it touches upon the rights of the participants in a general and indefinite manner. Taking into account the peculiarities of the corporation their reorganization essentialy differs from the reorganization of non-corporate legal entities both by the procedure of their implementation and the requirement of protection of rights of the corporation and its participants, and the regulations envisaged by the civil code of RA and the laws and other legal acts on the separate types of corporate legal entities do not provide such opportunity. The laws on corporate legal entities of separate legal organization form do not envisage reorganization procedures and refer to the civil code, which make the problem under study more actual and its solution more urgent.

The main issues concerning the forced reorganization are not properly studied and the present legislative regulations during its practical realization may create a number of problems of protection of rights of the corporation and its participants. The legal structures for reorganization, evaluation of the possible influence for the natural rivalry in the market and prevention of the natural influence are not made with due diligence.

As a result of the aforementioned observations, the relations arising in connection with reorganization of corporate legal entities on the model of economic societies, as well as the reorganization and the main issues of its legal regulation are the subject-matter of the dissertation.

The paper also analyzes the jurisprudence related to mentioned issues, and presents comparative analysis of foreign countries legislation and legal practice, which allowed to reveal the existing problems in the Republic of Armenia and to present concrete proposals on alteration of the civil legislation of the Republic of Armenia and on improving its enforcement practice.

© National Library of Armenia